0916.01.5 «ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ	
Պաշտոնի (զբաղմունքի) անվանումը	**0916.01.01.5 «ԴԵՂԱԳՈՐԾ»**
I. Դերը	Որակյալ, արդյունավետ, անվտանգ և մատչելի դեղերի պատրաստում, պահպանում և իրացում:
II. Խնդիրների բնագավառները	
<u>Խնդիրների բնագավառ 1.</u> ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ԴԵՂԱՏՆԵՐ, ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ) ԴԵՂԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ	
Աշխատանքային գործընթացը	✓ Պատրաստել դեղեր ըստ դեղատոմսերի, արտադրական ռեգլամենտի կամ առողջապահական հիմնարկների պահանջների, ✓ պատրաստել ներդեղատնային պատրաստուկներ և իրականացնել մանրակշռում, ✓ տիրապետել դեղերի ներդեղատնային վերահսկողության պարտադիր տեսակներին, ✓ պահպանել սանիտարա-հիգիենիկ նորմերի, աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի ու հակահրդեհային անվտանգության կանոնները:
Կատարման չափանիշներ	✓ Պատրաստված են դեղերը ըստ դեղատոմսերի, արտադրական ռեգլամենտի կամ առողջապահական հիմնարկների պահանջների, դեղանյութերի կոնցենտրացիան, կշիռը կամ ծավալը համապատասխանում են դեղատոմսով դուրս գրված, արտադրական ռեգլամենտում կամ առողջապահական հիմնարկների պահանջներում նշված դեղանյութերի կոնցենտրացիային, կշռին կամ ծավալին, ✓ ներդեղատնային պատրաստուկները պատրաստված են կշռածավալային եղանակով և ճիշտ են մանրակշռված, ✓ կատարված է գրավոր և բանավոր ներդեղատնային հսկում, ✓ պահպանված են սանիտարա-հիգիենիկ նորմերի, աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի ու հակահրդեհային անվտանգության կանոնները:
<u>Խնդիրների բնագավառ 2.</u> ՄԵԾԱԾԱԽ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	
Աշխատանքային գործընթացը	✓ վերլուծել դեղերի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների պահանջարկը, ✓ ձևակերպել մատակարարներին ներկայացվող դեղերի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների պատվերները, ✓ ձևակերպել նախնական հաշվառման փաստաթղթերը, ✓ մասնակցել դեղերի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների մեծածախ իրացմանը, ✓ պահպանել սանիտարա-հիգիենիկ նորմերի, աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի ու հակահրդեհային անվտանգության կանոնները:
Կատարման չափանիշներ	✓ ճիշտ է վերլուծված դեղերի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների պահանջարկը, ✓ մատակարարներին ներկայացվող դեղերի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների պատվերները ձևակերպված են ըստ պահանջարկի, ✓ ձևակերպված են նախնական հաշվառման փաստաթղթերը, ✓ մեծածախ իրացման կազմակերպումը կատարված է ըստ պահանջագրերի, ✓ պահպանված են սանիտարա-հիգիենիկ նորմերի, աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի ու հակահրդեհային անվտանգության կանոնները:
<u>Խնդիրների բնագավառ 3.</u> ԴԵՂԵՐԻ, ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ, ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ԻՐԱՑՈՒՄ	
Աշխատանքային գործընթացը	✓ Կատարել դեղերի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների ընդունում, պահպանում և իրացում, այդ թվում զեղչով և անվճար դեղատոմսերով՝ նորմատիվա-իրավական փաստաթղթերին համապատասխան,

	✓ դասավորել դեղերի, բժշկական նշանակության առարկաները և հարդեղագործական ապրանքները՝ ըստ դեղաբանական խմբերի, պահպանման և մերչենդայզինգի կանոնների:
Կատարման չափանիշներ	✓ Կատարել է դեղերի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների ընդունում, պահպանում և իրացում, այդ թվում զեղչով և անվճար դեղատոմսերով՝ նորմատիվա-իրավական փաստաթղթերին համապատասխան, ✓ դասավորել է դեղերի, բժշկական նշանակության առարկաները և հարդեղագործական ապրանքները՝ ըստ դեղաբանական խմբերի, պահպանման և մերչենդայզինգի կանոնների:
<u>Խնդիրների բնագավառ 4.</u> ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱ-ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ	
Աշխատանքային գործընթացը	✓ Ցուցաբերել տեղեկատվա-խորհրդատվական ծառայություն ազգաբնակչությանը՝ կապված դեղերի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների օգտագործման ու պահպանման հետ, ✓ սպառողներին տրամադրել տեղեկատվա-խորհրդատվական ծառայություն՝ դեղերի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների օգտագործման ձևի, պահպանման կանոնների և այլնի վերաբերյալ:
Կատարման չափանիշներ	✓ Ցուցաբերված է տեղեկատվա-խորհրդատվական ծառայություն ազգաբնակչությանը՝ կապված դեղերի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների օգտագործման ու պահպանման հետ, ✓ սպառողներին տրամադրված է տեղեկատվա-խորհրդատվական ծառայություն՝ դեղերի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների օգտագործման ձևի, պահպանման կանոնների և այլնի վերաբերյալ:
III.Պատասխանատվությունը	Դեղագործը պատասխանատու է պատրաստած և գործարանային

(անմիջական պատասխանատվության շրջանակ)	արտադրության դեղերի, բժշկական նշանակության առարկաների, հարդեղագործական ապրանքների որակի, դեղերի դեղաչափերի բաժանման և մանրակշռումների ճշտության, բաց թողնվող դեղերի ճիշտ ձևավորման, պիտակավորման և բաց թողման համար: Դեղագործն իր աշխատանքային պարտականությունների շրջանակներում սխալ գործունեության հետևանքով հիվանդի առողջությանը վնաս հասցնելու կամ մահվան դեպքում քրեական պատասխանատվություն է կրում:
IV. Լեզուները	✓ Հայոց լեզու – լավ, ✓ Ռուսերեն – բավարար, ✓ Անգլերեն – բավարար, ✓ Լատիներեն – անատոմիական, կլինիկական և դեղագործական արտահայտություններ ու տերմիններ:
V. Համակարգիչը	MS Word, Excel Internet Explorer
VI. Գիտելիքները	Դեղագործը պետք է իմանա ✓ դեղերի շրջանառության կարգավորման օրենսդրական դաշտը և աշխատանքային կանոնադրությունը, ✓ դեղագործության ոլորտում կիրառվող հիմնական տերմիններն ու հասկացությունները, ✓ մարդու ֆիզիոլոգիայի հիմունքները, ✓ բուսաբանության հիմունքները, ✓ մանրէաբանության հիմունքները, ✓ ֆարմակոգնոզիայի հիմունքները, ✓ դեղաբանության հիմունքները ✓ ձեռներեցության, դեղագործական մարկետինգի և մենեջմենթի հիմունքները, ✓ բժշկական և դեղագործական ապրանքագիտության հիմունքները, ✓ դեղագործական կազմակերպությունների կազմակերպա-իրավական ձևերը, ✓ նյութական պատասխանատվության տեսակները, ✓ դեղերի որակի հսկման եղանակները՝ ըստ դեղանյութերի ֆիզիկա-քիմիական հատկությունների, ✓ դեղերը՝ ըստ դեղաբանական խմբերի, ✓ դեղերի ներմուծման ուղիները և դեղաձևերը,

	✓ տարբեր դեղաձևերի (կարծր, հեղուկ, փափուկ) պատրաստման տեխնոլոգիայի առանձնահատկությունները և դեղագործական անհամատեղելիությունները, ✓ գնագոյացման եղանակները և դրամական միջոցների հաշվառումը, ✓ սանիտարական նորմերի, անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային անվտանգության պահանջները և շրջակա միջավայրի էկոլոգիայի պահպանման հիմունքները:
VII. Կարողությունները և հմտությունները	**Դեղագործը պետք է կարողանա** ✓ որոշի դեղերի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների պահանջարկը, ✓ ձևակերպի դեղատան տեսականու ապրանքատեսակների պահանջագրերը՝ մատակարարներին, ✓ մատակարարներից ընդունի դեղերը, բժշկական նշանակության առարկաները, հարդեղագործական ապրանքները և ստուգի դրանց փաթեթավորման ամբողջականությունը, ✓ պահպանի դեղերը, բժշկական նշանակության առարկաները և հարդեղագործական ապրանքները, ✓ օգտվի պաշտոնական տեղեկատու աղբյուրներից, դեղի ներդիր-թերթիկից, ✓ տարբերակի մարդու օրգանիզմի վրա դեղերի տարբեր դեղաբանական խմբերի ազդեցությունները, ✓ դասավորի դեղերը ըստ դեղաբանական խմբերի, պահպանման և մերչենդայզինգի կանոնների, ✓ սպառողներին տրամադրի տեղեկատվա-խորհրդատվական ծառայություն՝ դեղերի օգտագործման ձևի, պահպանման կանոնների և այլնի վերաբերյալ, ✓ կատարի բացակայող ԱԴՏ (առանց դեղատոմսի տրվող, OTC- Over the count) դեղերի հոմանիշային փոխարինում, ✓ ընդունի դեղատոմսեր, ստուգի բաղադրատարրերի համատեղելիությունը և դեղատոմսի ձևակերպման ճշտությունը, ✓ պատրաստի դեղատնային պայմաններում տարբեր

	դեղաձևեր (կարծր, հեղուկ, փափուկ), ✓ փաթեթավորի և ձևավորի պատրաստված դեղերը, ✓ բաց թողնի դեղատանը պատրաստված կամ գործարանային արտադրության դեղերը, բժշկական նշանակության առարկաները և հարդեղագործական ապրանքները, ✓ սպառողների հետ իրականացնի հետադարձ կապ, գրանցի և հաղորդի տեղեկություն՝ դեղերի կողմնակի ազեցությունների վերաբերյալ, ✓ ձևակերպի մուտքային և ելքային օրդերները, ✓ կատարի ապրանքա-նյութական արժեքների հաշվառում և գույքագրում, ✓ կատարի դեղատան և դրա ստորաբաժանումների գործունեության տնտեսագիտական վերլուծություն, ✓ պահպանի դեղագործական էթիկայի և դեոնթոլոգիայի հիմունքները, ✓ կանխարգելի մասնագիտական հիվանդությունները, ✓ ցուցաբերի առաջին բուժօգնություն, ✓ պահպանի սանիտարական նորմերի, անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային անվտանգության պահանջները:
VIII. Անձի որակական հատկանիշներ	✓ ցուցաբերել պատասխանատու վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ, ✓ տիրապետել դեղագործական էթիկային, ✓ կառավարել սթրեսը և ժամանակը, առաջացած հիմնախնդիրներին և կոնֆլիկտներին տալ համապատասխան լուծումներ, ✓ լինել նախաձեռնող, ստեղծագործող, նորարար, հաղորդակցվող, թիմային աշխատանքին պատրաստ, համբերատար, կազմակերպված և պարտաճանաչ: